ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19 Հեռ./ֆաքս՝ + 374 10 527400

04.04.2019 թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ» ԿԵՆՏՐՈՆ
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ Շ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ձեր գրությանն ի պատասխան՝ հայտնում ենք, որ «ARMDAILY.AM» լրատվական կայքի լրագրող Արփինե Պետրոսյանը 26.03.2019 թ. հարցումով դիմել էր ՀՀ Ազգային ժողովի լրատվության եւ հանրության հետ կապերի վարչությանը՝ տեղեկություն ստանալու ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակության՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն կատարած այցի վերաբերյալ: Վարչությունը 27.03.2019 թ. պատասխանել է բոլոր հարցերին:

Լրագրողի երրորդ հարցի առնչությամբ, թե որքան է կազմել պատվիրակության անդամների ավիատոմսերի, հյուրանոցի գումարը, ինչքան օրապահիկ են նրանք ստացել եւ որքան է եղել յուրաքանչյուր անդամի վրա ծախսված գումարի չափը՝ հայտնել ենք, որ հարցի պատասխանը կարգավորվում է ՀՀ Կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ: Խորհրդարանական պատվիրակության ճանապարհածախսն ու օրապահիկը վճարվել է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, իսկ գիշերակացի ծախսերը կատարվել են հրավիրող կողմի հաշվին՝ բացառությամբ ՀՀ ԱԺ նախագահի օգնականից ու Լրատվության եւ հանրության հետ կապերի վարչության լուսանկարչի ծախսերից:

Հարգանքով՝

ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀՐԱՅՐ ՋՈՐՅԱՆ